

Յարեան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Աւանձին համարները 7 կօպէկով.
Թիֆլիսում գրվում են միւսիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Բ Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

ՆԵՐՎԱՅ 1896 ԹԻԱՎԱՆԻՆ

24-րդ ՏԱՐԻ

24-րդ ՏԱՐԻ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն զիւրքով, նոյն պրօգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մեր ստանում ենք սեփական հեռագիրները:

Բ Ա Յ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ն Ը Շ Ա Ր ՈՒ Ն Ա Վ ՈՒ Մ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 րուբլի է, տան և
մէջ և տան ամսականը՝ 9 ր., ինչ և ութ ամսականը՝ 8 ր., եօթ ամսականը՝ 7 ր., վեց ամսականը՝ 6 ր.,
հինգ ամսականը՝ 5 ր., չորս ամսականը՝ 4 ր., երեք ամսականը՝ 3 ր., երկու ամսականը՝ 2 ր., մի ամսա-
նը՝ 1 րուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՐԱՎՊՍՍՆԸ (Բազմապատկեր և Բարձրագույն փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ճրարներ ուղարկելիս, պէտք է զիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Открыта подписка на 1896 годъ на газету

„КАСПИЙ“

(XVI годъ изданія)

Въ 1896 году „Каспій“ будетъ выходить въ Баку ежедневно, кромѣ дней послѣ-
праздничныхъ, по прежней программѣ газеты литературной, общественной и политической,
съ обширнымъ нефтянымъ отдѣломъ.

Подписная цѣна:

Съ доставкой: на 12 мѣс.—7 р., на 11 мѣс.—6 р. 50 коп., на 10 мѣс.—6 р., на 9
мѣс.—5 р. 50 коп., на 8 мѣс.—5 р., на 7 мѣс.—4 р. 50 к., на 6 мѣс.—4 р., на 5 мѣс.—3
р. 50 к., на 4 мѣс.—3 р., на 3 мѣс.—2 р. 50 к., на 2 мѣс.—2 р. и на 1 мѣс.—1 р.

Съ пересылкою: на 12 мѣс.—8 р. 50 к., на 11 мѣс.—7 р. 50 к., на 10 мѣс.—7 р.,
на 9 мѣс.—6 р. 50 к., на 8 мѣс.—6 р., на 7 мѣс.—5 р. 50 к., на 6 мѣс.—5 р., на 5 мѣс.—
4 р. 50 к., на 4 мѣс.—4 р., на 3 мѣс.—3 р., на 2 мѣс.—2 р. 50 к., и на 1 мѣс. 1 р. 50 к.

За границу: на годъ 13 руб. на 1/2 года 7 руб.

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ на слѣдующихъ условіяхъ:
при подпискѣ вносится не менѣе 3 руб. городскими и 4 руб. 50 коп. иногородними
подписчиками; затѣмъ 15 февраля—2 р. и 15 марта—2 руб.

Иногородніе адресуютъ свои требованія: въ Баку, въ редакцію газеты «Каспій».

Подписка принимается: въ Баку—въ конторѣ газеты, Армянская улица, домъ Красильни-
кова; въ Тифлисѣ—въ «Центральной книжной торговлѣ»; въ Кутаисѣ—при книжномъ магазинѣ
братевъ Чиладзе, противъ собора, на Тифлисской ул., собственный домъ; въ Батумѣ—при книж-
но-газетномъ агентствѣ М. Николадзе; въ Елисаветпольѣ—у Г. А. Алътаузена, при его торго-
вѣ аптекарскими товарами; въ Москвѣ—въ конторѣ Метцль; въ Н.-Новгородѣ—въ Рождествен-
скомъ газетномъ кіоскѣ, и во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ столицъ и провинцій.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ԳՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻՅ

Վերջին տարիները մեր գրականութիւնը շատ
զարգացեալ ամուսնական ինքնիշխանում, որոնց մէջ
է և ապահարզանը կամ ամուսնալուծութիւնը: Ա-
ռաջին անգամ ձայն բարձրագոյն ասպարզանի
օգտին այն մարդիկ, որոնք պահանջում էին ըն-
ֆօրմներ եկեղեցական վարչական օրէնքների
մէջ, որոնց զաւանթութեան հիմքն այն էր, թէ
օրէնքները սահմանվում են մարդկանց համար և
պիտի նպատակ ունենան ծառայել նրանց բա-
րօրութեան, յարմարվելով կեանքի անխուսափե-
լի պահանջներին, բարարութիւն տալով ժա-
մանակի ուղուն, հասկացողութիւններին: Այդպիսի
մարդկանց դէմ դուրս եկան, ինչպէս բնա-
կան էր սպասել, նրանք, որոնք ամեն ինչ կա-
տարեալ են համարում գոյութիւն ունեցող կար-
գերի մէջ, որոնք որ և է բարեփոխութիւն եկե-
ղեցական վարչական գործերի մէջ ընդունում են
արբապրութիւն, հիմքեր փորոզ, քանդող մի
գործ: Սրանց կողմն էր դարձել իմաստութիւնը,
որ տալիս էր վիճելու առանց նիւթ, առաջ էր
քերում աստուածաբանական, իրաւագիտական
կնճռոտ հարցեր: Ապահարզանը կղերական կու-
սակցութեան կողմից հրատարակվեց անկարելի
մի բան: Որովհետև գրածը, աւանդականը, հինը
այդպէս էր արամարդում: Մինչև իսկ ասպար-

զանի խնդիր յարուցանելը համարվեց անմու-
թիւն:

Իսկ կենսը, իսկ նրա պահանջները, հարց-
նում էին ամուսնական ինքնիշխանի մէջ ընօր-
նների կողմնակիցները:

Այդ հարցին ուղղակի պատասխանելուց խու-
սափում էին կղերականները: Եւ ինչ կարող էին
նրանք ստել: Հաշտեցնել իրականութիւնը գրա-
ծի, աւանդվածի հետ անկարելի էր, հետևաբար
իրականութիւնը աչքից գցելու մի բան էր: Հե-
տաքերի է այդ հայեցակէտը: Նրան բաւական
որոշ գծերով ձևակերպում է վենետիկի «Բազ-
մալկը», որ վերջերս բանակրի էր վարում
Կ. Պօլի «Հայրենիքի» դէմ ասպարզանի առի-
թով: Պատասխանելով վերջինիս այն կէտով,
որ յօշակում է իրական կեանքի պահանջները,
կաթօրիկ հայրերի հիմաւորը ամսագիրը (1895
օգոստոս, էր. 365) նախ վրդովում է, որ եկե-
ղեցական օրէնքների մեկնող են հանդիսանում
աշխարհականները և ապա ստում է ժողովրդի
մասին. «Իբրև թէ ամենքն ըսէին զլիտոյն մենք
ուր կուզենք, նոյն պարտիս առաջնորդել մեզ:»
Կղերականութեան այս հայեացքը հին է, պատ-
մական: Պատմութիւնը շատ և շատ անգամ է
զատապարտել այդ միտքը, զատապարտել է
այնպիսի խոշոր փաստերով, ինչպէս են Վի-
տեր, կրօնական արեւմտահայութիւններ, ինկվի-
զիցիա և այլն: Նրանք, որոնք այդպիսի մեծ
բողոքներ յարուցին կղերականութեան veto-նե-
րի դէմ, շատ լաւ գիտէին, որ բրիտանական
կրօնը եկեղեցուն և ժողովրդին չէ տուել զլիսի
և ոտներն նշանակութիւն: Եկեղեցին—դա ժողո-

ԲՈՎԱՆՈՒԿԱՎՈՒԹԻՒՆ

Ընդհանուր գրադիտութիւն. վրաց մամուլը,
Մանուկականներ և քաղաքային ինքնավարու-
թիւնը.—ՆԵՐՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աժօթ է. Կար-
ձեալ մի դաս ուսա խաւարամիտներին. Արեւ-
սասկական կրթութեան ժողով Մօսկվայում.
Նամակ Նուխուց. Նամակ Ախալքալաքից. Նա-
մակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վեր-
ջին տեղեկութիւններ. Նամակ Թիւրքիայից. Նա-
մակ Պարսկաստանից. Կուր փողով.—ՀՆՈՒԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ.
Գրական երեւոյթներ:

ԸՆԳՆԱՆՈՐ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընդհանուր և պարտաւորական գրադիտու-
թիւն մտցնելու մասին ահա մի քանի
տարի է, որ խօսվում է Ռուսաստանում:
Անցեալ տարի նոյն իսկ լուր տարածվեց,
որ այդ խնդրի զրական լուծումը մօտ է
իրագործութեան: ձիչը է, այդ մեծ գործը
գլուխ բերելու համար անհրաժեշտ են ա-
հապին գրամական միջոցներ, տանտեակ մի-
լիոններ և լուրջ պատրաստութիւններ.
սակայն դժուար չէ ապացուցանել, որ գը-
րագիտութեան տարածումը պէտք է այն-
պիսի մեծ և անասհման փրկարար հետե-
ւանքներ ունենայ, որ այդ ծախսերը յետ
կը ստացվին մեծ տոկոսով, առաջ բերելով
ժողովրդի զարգացման մէջ անթիւ բարե-
փոխութիւններ:

Կրթական գործի ներկայացուցիչները,
որոնք ժողոված էին նորերս Մօսկվայում,
նորից յարուցին և քննեցին այդ խնդիրը:
Ամբողջ պետութեան զանազան կողմերից
մի տեղ համախմբված մանկավարժներ,
տեխնիկներ, զիւղատնտեսներ, հրապար-
կախօսներ միաբերան վկայում էին, որ ժա-
մանակ է ժողովրդական տղիտութեան
դէմ կուր բանող ամենալուրջ կերպով,
արշաւանք սկսելով պետական և ժողովր-
դական միահամուռ պիտի:

Ժողովուրդը չունի զիտութեան պաշար,
լի է նախապաշարմունքներով, մշակում է

իր հողը և առաջ է տանում արհեստը
առանց կարևոր կատարելագործութիւննե-
րի. նա ենթակայ է անթիւ հիւանդու-
թիւններին, զրկանքների, մի խօսքով, նա
աղքատ է մտաւորապէս և նիւթ ա-
պէս: Պէտք է շուտով օգնութիւն հասցնել
նրան բոլոր միջոցներով: Իսկ այդ միջոցնե-
րի մէջ առաջին տեղերից մէկն է բռնում
զրազի տուութեան, սկզբնական կրթու-
թեան ընդհանուր արցունքը, նրա պար-
տաւորական դարձնելը իւրաքանչիւր
մարդու համար պետութեան մէջ:

Ներկայումս կառավարչական շրջաննե-
րում շատ նպաստաւոր արամարդութիւն է
տիրում կրթական գործի վերաբերութեամբ:
Միևիտարութիւնները համակրութեամբ են
վերաբերվում զարգացնելու բազմանարուն: Բու-
լոր մանր փորձերի և մասնաւոր ջանքերի
պսակը կը լինէր ընդհանուր գրադիտու-
թեան խնդրի լուծումը, որի մասին հարց
է յարուցված թէ միևիտարութեան մէջ,
թէ գեմտական շրջանում, թէ դիտա-
կան ընկերութիւնների և հաստատութիւն-
ների նիւստերում և թէ մամուլի լայնածա-
ւալ աշխարհում:

Եթէ կայ մի ուժեղ, յաղթական դէպք,
որ կարելի է սալ մի ժողովրդի, մի աղ-
ղութեան ձեռքը—դա ընդհանուր գը-
րագիտութեան մեծ և մեր ներքալ դարուն:
Կա է այն միջոցը, որով քաղաքակրթու-
թեան արդիւնքը, գիտութիւնը և արհեստ-
ները տարածվում են ընդհանուրութեան մէջ,
և այդպիսով գրահատում մարդուն իշխել
բնութեան խոչընդոտների վրա:

ՎՐԱՅ ՄԱՍՈՒՂ

Շատ անհաճելի է մեզ արձանագրել, որ
այժմ «Московскія Вѣдомости» լրագիրը
իր հակահայկական յարձակումների
համար նիւթ է գտնում ոչ թէ իր ներ-
ւելի և աներկայից թղթակիցների հիւան-
դոտ, զրգոված ֆանտազիայի մէջ, այլ մեր
հարեան վրաց հասարակութեան մամուլի
էջերում:

Լի Տաթևացի, Ոսկեբերան, Բարսեղ և այլ հա-
րեր ու մի հայրապետ:

Եւ այնպէս կղերք նստում է հոգեւոր ա-
տեաններում, սրտի հանդարտութեամբ, առանց
մարմնի վճռում է ամուսնական ողբայի դատե-
րը: Բանին են նրանք, որանց չեն պատահում
և ինչ ու ինչ կերպարաններ ունեն: Ամեն
տեղ, ուր որ գնում են, ամեն մի հեռու, մո-
ռացված անկիւնում, ամեն մի միջնապարտ—
թէ «բոյ» զիւղացու շրջանում, թէ քաղաքում,
վերջապէս ամեն մի թիղ հողի վրա, ուր աղ-
րում է մարդը, կայ այդ պատմութիւնը: Անթիւ
են այն դէպքերը, երբ ամուսնական դժոխքը
չարտնակ այրում, խորովում է ոչ միայն երկու
ամուսնիներին, այլ և ամբողջ ընտանիքը: Բայց
քիչ չեն պատահում և ամուսնալուծ մարդիկ ու-
կանաք: Ապահարզանը իրապէս գոյութիւն ու-
նի, բայց ձևականութիւններով չէ օրինականա-
ցած: Տղամարդը դուրս է անում իր կնոջը, բե-
րում է անպատկ մի կին, այրում է նրա հեռու:
Թէ կրթված են եկեղեցական պատիճներ, բայց
դրանք մաղի չափ արգելք դառնալ չեն կարո-
ղանում: Եւ ինչպէս կարողանան: Մեղ ծանօթ է
մի այսպիսի դէպք: Նոր պատկված մի տղամարդ
ուզում է իր կնոջ պատիւը ծախել մի թուրքին:
Կինը իմանում է այդ, դիմադրում է, բայց ի-
զուր, ինչ է մտած նրան անել, կամ պիտի լսէ
«Բազմալկը» խրատը (էր. 372), զոր հրաւանտե-
ւայն նուիրական խոստման զոր իրենց պսակ-
ման ժամանակ կատարել են «արբազան սեղա-
նոյն առջև» բոլոր կենաց մէջ յօժարութեամբ
տանելու միմեանց վշտերն ու ստապանքները:

Մենք, և մեզ հետ միասին ամբողջ հաս-
յոց և ուսուցող ինտելիգենցիան վաղուց
ընտելացանք Մոսկվայի և Պետերբուրգի
խառնարանի լրագրողների ատելի, անմիտ և
անհիմն հայհոյանքներին և աղմուկներին,
այլ ևս ոչ որի չէ գարմանում ոչ մի հայ-
հոյանք, ոչ մի ինտելեկտուալ, որ ապագա-
վում է այդ մամուլի էջերում: Բայց այդ
ընդհանուր «ընտելացման» մեջ անգամ մի
առանձին, անախորժ, տխուր ապաւորու-
թիւն է թողնում այն նոր փաստը, որ
այդ տեղի ինտելեկտուալները և յարձակում-
ների համար այժմ նիւթ մատակարարողը
վրաց մամուլն է, յատկապէս իշխան ձափ-
ձափաձէի խմբագրութեամբ հրատարակվող
«Իվերիա» լրագրողը:

Մենք այն կարծիքի ենք, որ իշխան իշխան
ձափաձէին չէ պատկանում վրաց ինտելի-
գենցիայի այն «թիթեռնափայլ» խմբին, որ
ընդ իրանց արեւմտակիցների երջանկութիւն-
ընդ որոնում են նեղ-ազգայնական ձգտում-
ների, և հարեան ազգերի հետ կուսակցու-
ման մեջ, և այդ պատճառով մեզ միանգա-
մայն ապշեցնում է այն փաստը, որ «Իվե-
րիայի» էջերում լայն են տեսնում հայոց
հասարակութեան գէտ ուղղած յօդուածներ
և լուրեր, և այդ էլ այն աստիճան ծայ-
րահեղ, որ հրճուանք է պատճառում
Մոսկվայի յետադէմ լրագրողներին...

Ուրեմն կրկնենք մի անգամ և այն սար-
րական ճշմարտութիւնը, որ այդ անսակ-
մի և նոյն երկրի, մի և նոյն պետութեան
մեջ ապրող ազգերի փոխադարձ ատելու-
թիւնը գրօշի օգուտ չէ կարող ստլ ոչ
պետութեամբ, ոչ այս և այն ազգին:
Մեզ թուում է, որ այդ տարրական ճշ-
մարտութիւնը շատ լաւ է հասկանում
«Իվերիայի» խմբագրերը, և այդ պատճա-
ռով մենք չենք կորցնում մեր յոյսը, որ
նա կը փակի իր լրագրի էջերը այն տե-
սակ խակ, փաստակար, և նոյն իսկ փաս-
տագրութեամբ համար, որոնք շատ-շատ
կարող են գրաւել լինել միմիայն երեսանե-
րի և այսպէս կոչված «թիթեռնափայլ»
համար:

Հայաձեղ յանցանքը, արդար, անաշուտ, ան-
կողմնակալ դատաստան անել, որքան էլ այդ
օրէնքները գեղեցիկ, իրէպարական լինեն,
եթէ այդ օրէնքի պաշտօնները, գործա-
դիրները կը ղեկավարեն կողմնակի, տեղա-
կան, ազգայնական և անձնական նկատում-
ներով: Բայց այդպիսի նկատումներով չը ղե-
կավարվելու և զանազան նախապաշարում-
ներով ազատ մնալու համար, պէտք է կանգ-
նած լինել կուլտուրական որոշ աստիճանի
վրա, որոշ զարգացում և կրթութիւն ու-
նենալ, մշակված մտքի, հոգու և սրտի տէր
լինել, իսկ այդ ամենը ձեռք է բերվում
միայն ուսման միջոցով: Այդ պատճառով
այսօր անհնարին է, որ մի անուսում, ան-
կրթ մարդու յանձնի ղատաւորի կամ
դատաստանական գործիչի պաշտօնը:

Քաղաքային ինքնավարութեան գործը
եթէ մեր երկրում կաղէկաղ է ընթա-
նում և մեր քաղաքների ազգայնականութիւն-
ները չեն վայելում այն բարիքները, որոնք
բոլորում են այդ ինքնավարութիւնից, դրա
զլխաւոր, եթէ ոչ միակ պատճառն այն է,
որ ինքնավարութեան գործադիր մարմին-
ները—գումաները և վարչութիւնները պա-
րունակում են իրանց մէջ բազմաթիւ տը-
գէտ, անկրթ անուսումներ:

Փորձը ցոյց է տալիս, որ այն դումանե-
րը, որոնք ունեն իրանց մէջ ուսում ստա-
յածները կամ կրթական ցէնը ունեցողները
մեծ կօն տիրէ գէտ, միշտ կանգնած են
լինում իրանց կուսման բարձրութեան վրա:
Ուսումը, կրթութիւնը կրթադրում է ոչ
միայն մտքի, այլ և սրտի, հոգու մշակու-
թիւն, ուրեմն որքան մեծ է մի որ և է
դումայի կրթական ցէնը, իր ամբողջու-
թեան մէջ, պէտք է նկատվել որ այնքան
մեծ կը լինի և նրա բարոյական մակերևոյ-
թը, այնքան նա ազատ կը լինի զանազան
փաստակար նախապաշարումներից և անձ-
նական կամ ցեղական նեղ ձգտումներից:

Անհրաժեշտ է ճշմարտութիւն է—և այս
մենք ասում ենք ոչ պարծնեկոտութեամբ
կամ եսասիրութեամբ, այլ բոլորովին օ-
բեկտիվ կերպով որ, ընդհանրապէս ա-
ռած, քրիստոնեայ տարրը մեր երկրում,
գէթ այժմ, անհամեմատ աւելի բարձր է
կանգնած թէ մտաւորապէս և թէ բարո-
յապէս, քան մահմեդական տարրը: Այդ
տեսակէտից ըմբռնելով ինչպէր, այն դու-
մաները, որոնք բաղկացած կը լինեն կամ
ամբողջովին, կամ մեծամասնութեամբ, քրիս-
տոնեայ տարրից, կարող են աւելի ի-
րանց կուսման բարձրութեան վրա կանգնած
լինել, քան այն դումաները, որոնք մեծա-
մասնութիւնը բաղկացած կը լինի մահմե-
դական ձայնաւորներից: Եւ եթէ քաղաքա-
յին ինքնավարութեան գործը դումաների

այժմեան կազմակերպութեամբ—որտեղ դեռ
մահմեդական տարրը 1/3-ով է երևան գա-
լիս—այնուամենայնիւ փնտրում է կրթված
ձայնաւորների մեծ կօնտիգենտ չունենա-
լու պատճառով, ապա որքան առաւել կը
փնտրվի այդ գործը, երբ մահմեդական, ու-
րեմն մի աւելի ազէտ և մտաւորապէս, բա-
րոյապէս ստոր տարր աւելի մեծ թուով
հանդէս գուրա զայ: Մակայն միւս կողմից,
կրկնում ենք, մեզ ամենեւին ցանկալի չէ
որ մահմեդական ազգայնականութիւնը զրկվի
իր քաղաքացիական իրաւունքներից և ա-
ւելի քիչ իրաւունքներ վայելի, քան քրիս-
տոնեան:

Ուրեմն, ինչ միջոց պէտք է որոնել, որ
թէ քաղաքային ինքնավարութեան գործը չը
փնտրվի, և թէ մահմեդական տարրը վայելի
իր քաղաքացիական իրաւունքները: Միակ
հնարաւոր և փրկարար միջոցը, մեր կարծի-
քով, կը լինի անպատճառ պայման դնել,
որ ընտրողները, քրիստոնեայ և մահմե-
դական, զերադասեն ձայնաւորներ ընտ-
րել կրթական ցէնը ունեցող անձանց,
կամ ձայնաւորներից, բայց զայնքան ցեն-
զից, պահանջվի նաև կրթական պատրաս-
տութիւն:

Գուցէ մեզ աւարկեն, թէ այդ տեսակ
պահանջ անելը մի և նոյն է զրկել մահ-
մեդական տարրը իր իրաւունքներից, որով-
հետև նա անկարող է կրթական ցէնը ու-
նեցող ներկայացուցիչներ տարու: Ահա մեր
պատասխանը այդ աւարկութեան. եթէ
մահմեդական տարրը այնքան քաղաքացիա-
կան աւաքիտութիւն և հասունութիւն չի
ունենայ, որ իր ներկայացուցիչներ ընտ-
րի արժանաւոր անձանց, առանց ցեղի
և կրօնի խտրութեան, և կամենում է, որ
իր ներկայացուցիչները քաղաքային ինքն-
ավարութեան մէջ անպատճառ իրանց լի-
նեն, այն ժամանակ թող նա հետամուտ
լինի կրթութեան, ուսում ձեռք բերելու և
անկախ մայրերը իր իրաւունքները:
Չը մոռանանք, որ կրթական ցէնը պահ-
անջը մենք ասում ենք անխախտ ամենից—
մահմեդական և քրիստոնեայ տարրերից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա Մ Օ Թ Է

Այդ վերնադրի տակ մարմնական պատժի դէմ
ձայն բարձրացրեց և ուսու հոգակաւոր գրող կոմս
Լ. Ն. Տոլստոյ «Вѣрж. Вѣдомості» լրագրում:
Մենք հարկաւոր ենք համարում ծանօթացնել
մեր ընթերցողներին նրա համակրելի, մարտաւէր
հայեացքների հետ, առաջ բերելով յօդուածի մի
քանի կտորներ:

Այսպէս են տուել Վենետիկի կղերականներին:
Մենք մի ուրիշ անգամ խօսել ենք այդ վէպերի
մասին և այժմ կարող ենք կրկնել մեր միտքը:
ձգարիտ է կուլտաստան հայ վէպը ունէր միայն
մի չափ և կաղապար. այն է՝ սէր երկու երիտա-
սարդ հոգիների մէջ, վառ, ինչպէս երկնային
կրակ, բայց չը զարկաւոր արդեւնքներով. ոչ մի
դէպքում այդ արդեւնքները չէր կարելի ողջա-
ցնել, որովհետև վիպագրողը աչքի առաջ մի
վերջնական կէտ կար—երկու գեղեզմաններ, ո-
րոնց վրա պար էր ողջալ ծնողական տգիտու-
թիւնը, բարեարտութիւնը և այլ այդպիսի ա-
րարքներ: Գա մի և նոյն երգն էր, որ կրկնվում
էր հարիւր եղանակով, հարիւր ու մի անուան
տակ: Գուցէ այդ վէպերից մի մասը պատկերա-
ցնում էր կեանքի երկրպիտները, արտաքինը, ձևա-
կանը ճշութեամբ, բայց թէ իրանց հիմնական
մտքով—անաշուտ սէրով—նրանք բոլորը հեռու
էին իրականութիւնից, դրա հաստատութիւնը
կարելի է գտնել նոյն իսկ այն հանգամանքի
մէջ, որ չը կայ ինքնուրոյնութիւն ոչ մտքի, ոչ
բովանդակութեան և ոչ էլ հոգեբանական վեր-
լուծութիւնների մէջ: Այդ տեսակ վէպը հեշտ
էր արտադրվում, ուստի և շատ էին վիպագրող-
ները: Չախճալված սէրը—դա երգվում էր ան-
թիւ անգամ ոչ թէ այն պատճառով, որ իրական
ճշմարտութիւն էր, այլ որովհետև միակ պատ-
րաստ իղէպարական հասկացողութիւնն էր, որ վի-
պագրողը տալիս էր հասարակութեանը իրեն ա-
ռաջորդող սկզբունքը: Մակայն այդ վէպը շուտ մո-
ռացվեց, միանման երգը շուտ յոգնեցրեց և դին
չուէր հրապարակվում. նրա փոխարէն առաջ եկաւ
կեանքի ուսումնասիրութեան իրական պահանջը:

«1820-ական թիւականներին, Միլեօնեան գնդի
օֆիցերները, այն ժամանակի երիտասարդութեան
ծաղիկը, որոնք մեծ մասամբ մասունք էին և
ապա դարձան ղեկավարներ, վճռեցին չը գոր-
ծադրել իրանց գնդում մարմնական պատիժը, և
չը նայած այն ժամանակների զինուորական ծա-
ռայութեան խիստ պահանջներին, գուցէր ա-
ռանց մարմնական պատիժ գործածելու էլ շա-
րունակեց մնալ օրինակելի:

«Այսպէս էին նայում մարմնական պատժի վրա
կրթված ուսու մարդիկ 75 տարի սրանից առաջ:
Անցաւ 75 տարի և մեր ժամանակ այդ մարդ-
կանց թիւները, դէմտույնի գլխուորների պաշ-
տօնով, նիստում են կազմում ատենաներում և
հանդարտ քննում են հարցեր այն մասին, պէտք
է թէ պէտք չէ, քանի հատ հարուած տալ այս
ինչ և այն ինչ չափահաս մարդուն, որ յաճախ
ընտանիքի հայր է լինում և երբեմն նոյն իսկ
պապ:

«Իսկ այդ թիւներից ամենաառաջաւորները մաս-
նաժողովների մէջ և զեմստույնի ժողովներում
յօրինում են յայտարարութիւններ, ուղերձներ
և ինդիպարներ այն մասին, որ առողջապահական
և մանկավարժական նպատակներով ծեծեն ոչ թէ
բոլոր մաժիկներին (զիւլայի դասակարգի մարդ-
կանց), այլ միայն նրանց, որոնք ուսում չեն վեր-
ջացրել տարրական դպրոցներում:

«Պարզ է, որ փոփոխութիւնը այսպէս անուան-
ված բարձր կրթված դասակարգի շրջանում անա-
գին է: 20-ական թիւականների մարդիկ, մարմնա-
կան պատիժը մի ամօթալի գործողութիւն հա-
մարելով իրանց համար, կարողացան ողջացնել
նրան զինուորական ծառայութեան մէջ, ուր նա
անհրաժեշտ էր համարվում: Մեր ժամանակի
մարդիկ հանդիստ գործողութիւն են պատիժը ոչ
թէ զինուորների վրա, այլ ուսուցող ժողովրդի
դասակարգերից մէկի վրա և զգուշութեամբ,
զիւսանալիտական ձևերով, մասնաժողովների և
այլ ժողովների նիստերում, ամեն տեսակ պատ-
ճառարանութիւններ և մանուածապատ ուժեր գոր-
ծածելով, տալիս են կառավարութեան ուղերձ-
ներ և ինդիպարներ այն մասին, թէ բողոքով պատ-
ժելը չէ համապատասխանում առողջապահութեան
պահանջներին և այդ պատճառով պէտք էր, որ
սահմանափակվէր, կամ թէ ցանկալի կը լինէր
որ ծեծէին միայն այն ղեկավարներին, որոնք հա-
սարակ գրագիտութեան դասընթացը չեն վեր-
ջացրել և կամ թէ ծեծից ազատ համարվէին այն
զիւլայիները, որոնց յանցանքները ներկած են
թագաւոր կարգի պատկարներով և առիթով
հրատարակված մանիֆեստով:

«Պարզ է, մի սարսափելի փոփոխութիւն է կա-
տարվել ուսուցող բարձր կոչված հասարակութեան
շրջանում: Եւ որ ամենից շատ դարձանալիս է

Եթէ, այնուամենայնիւ, վէպերը չեն ընդուն-
վում իբրև ստեղծագործութիւն, այլ իբրև կենս-
քի լուսանկարներ, ինչ իրաւունքով պիտի սըն-
դենք, թէ ապահարգանի հարկաւորութիւն չը
կայ, քանի որ դրանք, այդ վէպերը, այսպէս են
լուսարանում ամուսնութեան հանգամանքները:
Նկատենք, որ նոյն իսկ անհոյսք վիպագրողը
էլ չի վերցնի կեանքի հասարակ երեւոյթները
ուստի և վէպերի մէջ բերած դէպքերը պէտք է
համարենք անհասկանալի, մինչդեռ ոչ մի երկ-
րում բոլոր ամուսնութիւնները չեն հիմնված
փոխադարձ սէրի վրա: Եւ վերջապէս, եթէ վէ-
պերն են մեր վաւերաթղթերը, մենք միշտ
պէտք է հաւատացած լինենք, որ մարդկային
ազգին իրական դժբաղդութիւն չէ կարող պատ-
ճառել ճնշված սէրը կամ ծնողական բարբարո-
սութիւնը. չէ որ վէպերը միշտ վկայում են, թէ
արդեւնքներով շրջապատված սէրը տանում է սի-
րողներին դէպի գեղեզման: Եթէ այդպէս լինէր,
մեր ղեկերի գեղեզմանտանները վիպագրութիւն-
ների հատորներ կը լինէին և այնտեղ չէնք
գտնի և ոչ մի հատ դժբաղդ ամուսնութեան
պատմութիւն:

Ոչ, վէպերը չեն իրականութեան քարտիչը:
Ուսումնասիրեցէ կեանքը և ձեր առաջ Գան-
տէի սէրով ծաղկած բուրաստաններ չէ տեսնի,
այլ փչերով լի անապատներ, ուր հասկացողու-
թիւնների մի այլ աշխարհ է ապրում:

(Կը շարունակվի)

**ՄԱՀՍԵՏԱԳԱՆՆԵՐԸ ԵՒ ԲԱՂԱԲԱՅԻՆ ԻՆՔԻ-
ՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

Ամենալաւ օրէնքը որ և է պետութեան
մէջ կարող է բոլորովին փչանալ և նոյն իսկ
փնտրակար դառնալ վատ, անընդունակ և
տղէտ գործադրողների ձեռքում:

Գատատանական օրէնքները երբէք չեն
կարող իրազործել իրանց հիմնական նպա-
տակը—վերականգնել ոսնակիտ եղած ար-
դարութիւնը, ճշմարտութիւնը, պատժել և
և արատաւորէ իր մարդկային պատիւը, կամ
թէ պիտի թողնէ այդ անբարոյական մարդու
չը ջանք և հեռանալ, լաւ իմանալով որ դրա
համար պիտի կրէ խիստ պատիժներ: Ինչպէս
կարող ենք մեղադրել այդ կնոջը, եթէ նա ոչ
չինչ է համարում պատիժները, որպէս զի պաշտ-
պանէ իրան, չը իրով անբարոյականութեան
ցեխի մէջ: Այժմ առաջանում է անողորմ հար-
ցը. նա թողեց ամուսնուն և դուր ղատասար-
տում էք նրան յախտեան անաւուսին մնալ,
բայց ինչու, որն է նրա մեղքը... Այս միայն մի
դէպք է: Բայց դեռ քանի-քանի կերպարաններ
ունի ամուսնական անհաւատարմութիւնը: Թող
նենք նոյն իսկ անհաւատարմութիւնը: Վերցրէք
մի հասարակ, առօրեայ երեւոյթ, որ կրկնվում է
հարիւր անգամ և հազար տեղ: Ամուսնութիւ-
նից յետոյ տղամարդ ու կին չեն կարո-
ղանում միասին ապրել. չը կայ համաձայնու-
թիւն, չը կայ միաբանութիւն: Գա կացութիւն
չէ, այլ կատարեալ դժոխք: Ինչ անեն: Քահա-
նան իրատու է, բարեկամ ու ազգական յորդո-
րում են յաղաղ մնալ, հաշտվել: Բայց սրտի
բան և այդ իրատուները չեն համողում ոչ մէկին:
Ատում են ամուսնիները միմեանց, շատ անգամ
այդ ատելութիւնը քրեական յանցանքներ է ա-
ռաջացնում. քանի քանի դժբաղդ դէպքեր են
տեղի ունեցել, բայց ո՞վ է նրանց կշռել ու զը-
նահատել: Հարցնում ենք. միթէ քրիստոնէական
կրօնը, նա, որ աղատութեան, հաւատարմութեան
մայրն է, կարող է այդ տեսակ մի ամուսնական
դժոխքի հիմք համարվել:

Մենք երբէք չենք վերջացնի, եթէ շարունա-
կէինք օրինակներ և դէպքեր բերել ու վերլու-

ծել: Աղբըրը ամենից շատ գիտէ այդ դէպքերը,
որովհետև նա է դատաւորը: Հիմա պէտք է իմա-
նալ, թէ ինչպէս է նայում նա այդ անընտան
երեւոյթների վրա: «Բաղմովկայը» ցատկոյնութեան
մի կտոր ունի պահած: «Յիրաւի, ասում է նա,
անուրանալի է դաւառաց մէջ ամուսնական վի-
ճակին խղճալի կացութիւնը»: Այսքանը միայն...
Ել մի որոնէք ցանի դարման, խորհրդակցութիւն
արմատական միջոցներով մասին: «Խղճալի կա-
ցութեան» պատճառները լաւ գիտէ կղերը և
ձեռքերը լուսայել է յետ կանգնել: Յայտնի է
դառնում, որ արդէաների պատճառ ոչ այլ ինչ
է, բայց միայն շարակաւութիւնը կրօնական դաս-
տիարակութեան և մոռացումն եկեղեցական
կարգաց: Այդ եղբակացութիւնները Միթիա-
րեան կղերականները զիտէք որտեղից են հանել:
—«Կովկասեան հայոց ազգաւոր ջանիւք հրատա-
րակում» վէպերից:

Թէ որոնք են այդ վէպերը, մենք չենք էլ հե-
տաքերվում իմանալ: Գիտենք միայն այն, որ
մեր վէպերը նրան շատ ազգաւոր են թուով և բո-
վանդակութեամբ, երկրորդ չեն պատկերա-
ցնում իրանց մէջ կեանքի բոլոր բարբ, բազմա-
դիմի կողմերը: Եւ երբ «Բաղմովկայի» յօդուա-
ծադիրը շարունակում է իր դատողութիւնները,
հիմնված այդ վէպերի վրա, երբ նա յիշատա-
կում է, թէ ինչպէս պատկում են բաւութեամբ,
ինչպէս ծնողները զրկում են իրանց ղեւակնե-
րին ամուսնական ազատ ընտրութեան իրաւուն-
քից, շահատիրութեամբ կուրացած կը պատկեն
չը սիրածին հետ կամ կը զրկեն սիրածին, այն
ժամանակ միայն հասկանում ենք, թէ ինչ վէ-
պեր են նրանք, որոնք իմաստութեան այդքան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասկովա, ղեկավարներ 7-ին Ամեն տեղ կան օրաթիւրեր, որոնք հասարակութեան որոշ մասի արտադրութեան վերաբերմամբ կատարում են ճիշդ նոյն դերը, ինչ դեր կատարում են մեծ քաղաքներում կոյուղիները (КЛОУКЪ): Ինչպէս բոլոր արտադրութիւնները հոսում թափվում են կոյուղիների մէջ, այնպէս և հասարակութեան որոշ մասի բոլոր եւամուկ և աղտոտ ձգտումների, անասնական բնազդունների և ստոր ու վնասակար արտադրութիւնների թարգման են հանդիսանում որոշ տեսակի թերթեր:

Այդ դերն են կատարում ուսաց մէջ «Московскія Вѣдомости» և «Новое Время» լրագիրները: Թիֆլիսում ևս գոյութիւն ունի այդպիսի մի կոյուղի—լրագիր, որի վերջին համարներից մէկի մէջ ղեկավարում են Մ. Բ.-ի հոգեւոր արտադրութեան ղեկավարները:

Վերջին երեք տարվայ ընթացքում իմ թղթ-թղթագրութիւնների մէջ նկարագրված են եղել այստեղի ծխականների ընդհանուր ժողովները և արձանագրված այն տեղի ղեկավարը, որ տեղի են ունեցել այդ ժողովներում 80—100 մարդու ներկայութեամբ: Եւ իմ թղթագրութիւնների մէջ յարձակվել եմ այն մի խումբ մարդկանց դէմ, որոնց դրդմամբ և թելադրութեամբ տեղի են ունեցել այդ ժողովներում այնպիսի տեսարաններ, որոնք յատուկ են միայն փողոցային խումբանին:

Մ. Բ. իր յօդուածով, որ զլիստորապէս բարկացած է իմ հասցէին ուղղած արեւոյցփեղ հայտնայններից, այնպետեղով ստել իմ նկարագրած իրողութիւնները, ի միջի այլոց ասում է՝ «Իսկ եթէ անցեալում մի այդպիսի դիտարկութիւն է եղել և կամեցել են ծեծել ձեզ (այսինքն ինձ), պարոն, մեղաւոր դուք էք»: Ամենից ստալ այս իմ գրածների հերքումն չէ, այլ սպառնացումն է:

Ով կամածում է, թէ մարդկային յիմարութիւնը ևս անասնային է, խորհուրդ կը տայի կարգաւ Բ.-ի յօդուածը, որի մասնաւոր վերլուծելու տողերը զարմանալի սպառնոյց կարող են լինել մարդկային յիմարութեան անասնայնութեանը: Եթէ ծխականների վերջին ժողովից երկու ամիս անցնելուց յետոյ, բացի անձնական ու անպատկառ հայտնայններից, ուրիշ ոչինչ չէք կարողանում գրել, և վերջն էլ խոստովանում էք թէ՛ «դիտարկութիւն է եղել և կամեցել են ինձ ծեծել», միթէ՛ դրանով պարզ ցոյց չէք տալիս, թէ ինչ անասնական բնազդուններով էք առաջնորդվելիս եղել դուք ընտրողական գործերում: Իմ նկարագրածս էլ հէնց այդ է, ուրիշ ոչինչ: Գուր հերքում էք այն, ինչ որ ձեր բերանովն էք խոստովանում:

Նմանօրինակ յիմարութեան սպառնոյց տալիս է մի բժիշկ—ծխական, որի անունը ինչեւ միանգամայն աւելորդ կը լինէր: Նա նոյնպէս կամեցածով ստել իմ նկարագրած փողոցային ու այլանախ ղեկավարը և «վերականգնել փաստը», խոստովանում է, որ ինքը ծխականների ընդհանուր ժողովում յիշատի ասել է այս խօսքերը եւ կեղեցական խորհրդի անդամներից մէկին, թէ՛ «բարկաւարի խօսքեք, եթէ ոչ եւ ձեզ ապտակ կը խիփեմ»: Յետոյ շարունակում է թէ՛ «նա (այդ խորհրդի անդամ) արժան էր ոչ թէ սպանուած լիք միայն լինել, այլ և արտակա հարկ լինել և ոչ յօդուած... Եթէ՛ այժմ յօդուածների մէջ դուք այսպիսի անզուպ վայրենութիւն էք արտայայտում, եթէ՛ այսքան ժամանակ անցնելուց յետոյ դուք ուրիշ լեզուով չէք կարողանում խօսել, այլ միայն հայտնելով—հետո է երևակայել, թէ ինչ կը լինէր ժողովների ժամանակ, երբ ձեր կրքերն ու բնազդունները անմիջապէս գրգռված էին: Քիչ յետոյ այդ նոյն մարդը աւելացնում է՝ «բայց և այնպէս մենք սրտով ցատում ենք, որ գրգռված լինելով արտասանեցինք ժողովում մեր այդ սպանուածը, կրկնում ենք, մենք գրգռված էինք: Իսկ եւ հարցնում եմ, արդեօք միայն դուք էիք այդպէս գրգռված, թէ՛ դուք բոլորդ էիք այդպէս գրգռված, և ում վայել է ժողովներում այնպէս գրգռվել, որ իր արածն ու ասածը չիմանայ, եթէ ոչ փողոցային խումբանի պատկանող մարդկանց: Ի հարկէ, կոյաջրի նմանութեան ունեցող այդ յօդուածն էլ, որ արտաթորել է բժիշկ ծխա-

ժողովը առանձին նիստեր նուրբաց ղարոցական թուանշանների խնդրին և եկաւ այն եզրակացութեան, որ թուանշաններին պէտք է տալ անմասնական նշանակութիւն և չը պէտք է ներանց պարտաւորական համարել, այլ թողնել մանկավարժական ժողովների բարեհայեցողութեան:

ժողովի անդամները գտնելով, որ յարուցած խնդիրների քննութիւնը մեծապէս օգնեց նրանց աջող լուծման, որոշեցին խնդրել, որ թղթագրութի կայացնել նոր համառուական ժողով Օղեսայում, 1899 թ-ին:

ՆԱՄԱԿ ՆՈՒԻՈՒՅ

Գաւառացի և գիւղացի ծնողները նրանք, որոնք կամենում են իրանց որդեղ եթէ ոչ բարձրագոյն, գոնէ միջնակարգ կրթութիւն ստալ, բաւականին դժուարութիւններ են հանդիպում: Նրանք ստիպված են թողնել իրանց զործը և ամառվայ արձակուրդների ժամանակ տանել իրանց որդեղ մեծ քաղաքներից մէկը և յանձնել նախապատրաստութեան համար՝ մի որ և է ուսուցչի՝ բաւական մեծ վարձատրութեամբ:

Բայց որքան դիւրութիւններ կը ստանան ծրնողները, երբ իրանց քաղաքում ամառվայ արձակուրդների ժամանակ բացված լինեն նախապատրաստական դասընթացներ, նա անասնայն կերբ դասընթացների կատարվելը յանձն է առնում տանել աշակերտներին և ընդունել տալ նշանակեալ ղարոցները: Այդպիսի դասընթացներ անցեալ ամառ Նուխում բաց է արել կերակրութեայ ղարոցի հիմնադիր Յ. Մէլիք-Չհանեանը, ունեցել է բաւականաչափ աշակերտներ, որոնցից մի մասը ճիւղ, և համարեալ բոլոր այն աշակերտները, որոնք պատրաստվել են միջնակարգ ղարոցների համար, ընդունվել են համապատասխան դասարաններ:

ժողովուրդը համակրանքով է խօսում այդ դասընթացների մասին և մեր լսածների վրա հիմնվելով խորհուրդ ենք տալիս Մէլիք-Չհանեանին բանալ այդպիսի դասընթացներ և այս ամառ, որով մեծ ծառայութիւն մատուցած կը լինի թէ՛ կրթական գործին և թէ՛ տեղացի ազգաբնակչութեանը:

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ԱՌԱՎՔԱՎԱԳՐՈՒԹԵԱՆ

Գունավոր 3-ին Ինչպէս անցեալ տարիները, այս տարի էլ մեր հասարակութիւնը նոր տարուն դիմաւորեց ընդհանուր պարահանդեսով: Նախաձեռնութիւնը, ինչպէս և մուտքը պատկանում է Բարեգործական կոմիտեան տեղական ճիւղին: Չուտ արդիւնք մնացել է 162 բուրլի:

Պարահանդեսը լոկ գուարձանէր բնաւորութիւն ունէր, դրական մասը բոլորովին բացակայում էր. ի նկատի չէին տանված նաև ընթացիկ պատմական կենսոց կենդանի պատկերները, որոնք թէ՛ կրթիչ ազդեցութիւն ունեն և թէ՛ մեծ հեռաբերողութիւն կը պատճառէին հանդիսակցաներին: Թղթագրութեայ պար, առատ բուրլներ, կրկնակի ընթերցանք—արանք էին երկոյթի հետաքրքիր կողմերը:

Հանդէսին երգում էր քառաձայն երգեցիկ խումբը, որին մասնակցում էին ուսուցչներ, երիտասարդներ, օրիորդներ և մի վարժուհի: Այդ էր պարահանդեսին քիչ թէ՛ շատ լուրջ բնաւորութիւն ստաղը: Խմբին առաջնորդում էր ուսուցիչ Տօնականեան: Նոյն խումբը, ինչեալ պարանի առաջնորդութեամբ, պատրաստվում է ծննդեան ճրագայտոյցին քառաձայն երգելու:

Ի ղեպ, կարա-Մուրզայի մեր քաղաքը այցելելուց յետոյ սովորութիւն է մտել պատարագին նրա քառաձայն եղանակով երգելը. բայց, ղեթ-բաղդաբար, այդ տեղի է ունենում տարվայ մէջ մէկ երկու անգամ միայն: Մեր կարծիքով, կարելի էր նոյն քառաձայնով երգել եթէ ոչ ամեն կիրակի, գոնէ զլիսաւոր տօներին, եթէ՛ Տօնականները աշխատէր այդ մասին խմբի հաճութիւնը ձեռք բերել, որ այնքան էլ դժուար չէ: Այդ կը լինէր մեր գաւառական քաղաքների բացառիկ երկոյթներից մէկը, որը թէ՛ ցանկալի և թէ՛ գովելի է:

Գր. Տէր-Պող.

Վատ, մեր ժամանակին, քրիստոնէական ոգուն հակառակ արարքների դէմ: Չար սերմանողներ կան: Այդ երկոյթը շատ տխուր, յուսահատական կը լինէր, եթէ նրանց գործերը չընչացնէին բարի սերմանողները, մարդիկ, որոնք գիտեն ազգերի և ժողովուրդների փոխադարձ եղբայրացեցութեան անազին խորհուրդը:

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Գեկտեմբերի 28-ին Մոսկովայում բացվեց արհեստագիտութեան և առհասարակ կրթութեան վերաբերեալ մի ժողով, որ տանն օր շարունակ նիստեր ունեւարաց յետոյ փակվեց յունվարի 7-ին: Ժողովը բաղմամբ էր և յարուցեց ու մշակեց շատ խնդիրներ: Յիշեալ ժողովի քննութեան ենթարկված խոչոր խնդիրներից մի քանիսը:

Յայտնի պրոֆէսոր Էրիսմանի նախագահութեամբ քննվեցին ղարոցական առողջապահութեան հարցեր՝ մաքրութեան, մարմնամաքրութեան, օդի, լույսի մասին և կայացրվեցին հետեւեալ որոշումները. 1) Ֆիզիքական կրթութիւնը պէտք է մտցնել իբրև պարտաւորական կէտ ուսումնական ծրագրի մէջ. 2) ցանկալի է, որ այդ գործը յանձնվի ուսուցիչներին, ուստի անհրաժեշտ է, որ ուսուցչական սեմինարիաներում այդ առարկան մտցվի իբրև պարտաւորական. 3) մարմնի մաքրութիւնը համարել իբրև կարևոր պայման առողջութեան համար, ուստի միջոցներ ձեռք առնել աշակերտներին յաճախ ուղարկելու բաղնիքներ (սաուն և տաք). 4) ղարոցական սեմինարիան մեծութիւնը, օգտակարութիւնը յարմարեցնել այնպէս, որ իւրաքանչիւր աշակերտ ստանայ բաւականաչափ օդ և լույս. 5) ուշք դարձնել ձեռնարկների տիպի և տեսակի խոչորութեան վրա, որպէս զի աչքի հիւանդութիւնների առաջ առնված լինի այդպիսով:

Չանազան մանկավարժների և, ի միջի այլոց, կրկնական չըջանի հոգաբարձու Նանովսկու առաջարկութեամբ որոշվեց կրթական գործի բարելոման համար շատ օգտուէտ և նպատակայարմար համարել ուսուցչական ժողովը և րհրաւրել թէ՛ մի յայտնի ուսումնական չըջանի համար և թէ՛ համառուական՝ զանազան չըջաններ խմբելով միասին:

Գիւղական ազգաբնակչութեան էական օգնութիւն հասցնելու համար շատ կարևոր դասեց ժողովը բաղմացնել ստորին գիւղատնտեսական դպրոցներ թիւը: Այժմ ամբողջ Ռուսաստանում այդ տեսակի ղարոցներ շատ սակաւ են. ամբողջ 24 նասանդ բոլորովին զուրկ են այդպիսի կրթարաններից: Անհրաժեշտ է այդ ղարոցների նիւթական միջոցները աւելի լաւ կերպով ապահովել, քան այժմ այդ տեղի ունի և բարելաւել ղարոցներին կից փորձական ազգաբնակչի լիճակը և կրթական մասը:

Պրոֆէսոր Ստեբուտը կարգաց մի մանրամասն և հետաքրքրական ղեկնուած կանանց գիւղատնտեսական կրթութեան մասին, որ արեւելք տեւեց բաղմաթեւ նկատագրութիւններէ: Ժողովը կայացրեց հետեւեալ որոշումները. կանանց գիւղատնտեսական կրթութիւնը համարելով ցանկալի և անհրաժեշտ, բանալ երկու տեսակի ղարոցներ. ստորին՝ գիւղատնտեսական զանազան ճիւղեր գործնականապէս ուսումնասիրելու համար, և բարձրագոյն—ընդհանուր գիւղատնտեսութիւն ուսանելու համար:

Ժողովը շատ մեծ ուշադրութիւն դարձրեց բոլոր այն առաջարկութիւններին վրա, որոնք նպատակ ունեն կրթութիւն տարածել հասարակարգին և յիշատակին: Կիրակօրեայ ղարոցների, ժողովրդական դասաստութիւնների, ներկայացուցիչների, կրթական տօնախմբութիւնների մասին կարգաւեցին մշակված ղեկնուածները: Արդարացի կերպով նկատում էին ղեկուցանողները, որ ամբողջն պէտք է կրթել այն միջոցներով, որ այժմ այնպիսի աջողութեամբ գործադրվում են լուսաւոր երկրներում: Տիկին Սեբուտ, ի միջի այլոց, առաջարկեց առանձին ուշադրութիւն դարձնել երաժշտութեան կրթական նշանակութեան վրա և պատմեց հետաքրքրական փաստեր, թէ ինչպէս նա հասել է շատ միութարական հետաքրքրելի, տարածելով գիւղական ազգաբնակչութեան մէջ նոյն իսկ օպերային երաժշտութիւնը:

այդ փոփոխութիւնը տեղի է գտել հէնց այն իսկ ժամանակ, երբ նոյն այն դասակարգի մէջ, որին հարկաւոր է համարվում ենթարկել ծեծի ղարուէլի, կոպիտ և յիմար տանջանքներին, այս 75 տարիների մէջ, իսկ մասնաւոր ճորտութիւնից ազատվելուց յետոյ վերջին 35 տարիների ընթացքում կատարվել է նոյնպիսի մի անազին փոփոխութիւն, բայց միայն հակառակ ուղղութեամբ:

«Այն ժամանակ, երբ բարձր դասակարգը այնքան կոպտացել է և բարոյապէս ցած ընկել, որ օրէնքի մէջ է մտցրել ծեծը և հանդիսա դատութիւններ է անում նրա մասին, գիւղական դասակարգի մէջ այնքան բարձրացել է մտաւոր և բարոյական մակերևութիւնը, որ մարմնական պատժի գործադրութիւնը այդ դասակարգի մարդկանց կողմից համարվում է ոչ միայն ֆիզիքական, այլ և բարոյական տանջանք:

(Ար շարունակվի)

ԳՐԱԶԵԱԼ ՄԻ ԴԱՍ ՌՈՒՍ ԽԱՆՐԱՍՏԻՆԵՐԻՆ

«Новое Обозрѣніе»-ի մէջ տպած մի թղթագրութիւնը ցոյց է տալիս, որ «Новое Время», «Московскія Вѣдомости» և այլ դրանց պէս լրագիրները անարգ արհեստը, որն է կովկասի այլապէս ազգերը ամեն տեսակ ստերով ամբաստանելը, անհոգութիւն է պատճառել նաև Գուլայիսի նահանգի ազնուականներին: Գեկտեմբերի 17-ին կայացած ազնուականների ժողովում ազնուականների պարագլուխը խօսեց մի երկար ձևա, ամբողջապէս նուիրած լրագրական ղարաբանութիւններին:

Հատկապէս կրկնեց նոյնը, ինչ որ ասաց թիֆլիսի նահանգի ազնուականների պարագլուխը: Նա չեղանց, որ այդ լրագիրները բարձր կատարութեան արամադրութեան և հայեաղքների արտայայտիչ չեն: Եւ դառնալով պատմական այն հանգամանքներին, որոնք հարկադրեցին վերադառնալ մտնել Ռուսաստանի հովանաւորութեան տակ, ազնուականների պարագլուխը ասաց, որ վրաստանը զօրով նուաճած մի երկիր չէ, այլ իր սեփական կամքով և ցանկութեամբ ինդրել է Ռուսաստանի հովանաւորութիւնը, յոգնած լինելով այն դարաւոր պատերազմներից, որոնք մղվում էին քրիստոնէութեան թըշնամիների դէմ:

Ազնուականների պարագլուխը նկարագրեց և այն մարդկանց բարոյականը, որոնք գրում են այդպիսի ղարաբանութիւններ: Գրանք հայրենասէրներ չեն, ասաց նա, որովհետև հայրենասիրութիւնը երբեք չի թող տայ փոխադարձ ատելութեան սերմեր ցանկ մի ընդհանուր հայրենիքի անդամների մէջ, այլ ընդհակառակն, պիտի ձգտէ միացնել երկրի բազմազան տարրերը համերաշխութեան, փոխադարձ համակրանքի կապերով:

Մնում է ասել, որ գրողները ղեկավարվում են միայն անձնական շահերով: Նրանք չեն ճանաչում մեր երկիրը, մեր պատմութիւնը, այլ կամ հնարում են փաստերը, կամ դատարարում են եղածները այնպէս, ինչպէս իրանց քաճաճութիւնն է թելադրում և այդպիսով հանում են այնպիսի եզրակացութիւնների, որոնք վերաւորում են ամբողջ ազգերի պատիւը, հպատակութեան զգալմունքները:

Ի վերջոյ ճառախօսը յորդորեց ամենքին ուշադրութիւն չը դարձնել այդ լրագրական ղըրպարութիւնների վրա:

Ազնուականների ժողովը, ինչպէս հազորդում է թղթակիցը, հաճութեամբ լսեց այդ ճառը և միանգամայն բաւականացաւ այդ բացատրութիւններով:

Մեր կողմից մենք կարող ենք աւելացնել միայն այն, որ Գուլայիսի ազնուականութեան պարագլուխը յայտնած մտքերն ու հայեաղքները միաբերան ճիշդ և արդար են համարում մեր երկրի բոլոր բնակիչները, բոլոր այն ազգերը, համայնքները, որոնք ղարաբանութեան, անլուր մեղադրանքների առարկայ են դարձել, որոնց հալածելը, վատաբանելը այնքան մեծ հաճութիւն է պատճառում ուսու խաւարաւիտ մամուլին:

Ազացոյց, որ այդ մամուլը ուսաց հասարակական կարծիքի արտայայտիչը չէ, այդ երեւում է նոյն իսկ այն հանգամանքից, որ գնալով ուսու մամուլի մէջ բաղմանում են ազնիւ, ճշմարիտ հայրենասէր մարդկանց բողբոջները այդ

կանի մարզից, զետեղված է նոյն կոյուղի—լրագրում:

Այժմ կարծեմ պարզ է, թէ ով է սուտ խոսում: մեռած է միայն բացատրել, թէ ինչն է ստիպում այդ մարդկանց անկախորդ իրողությունները ուրանալով սուտ խոսել:

Ամեն մարդ մի գործ, մի փէշակ ունի, որով ավարտ, իր գլուխը պահում է: Մ. Բ. փէշակն էլ «սերթուկաւոր զեաղաներին» չոյնն է և նրանց բնազդունների թարգման հանդիսանալը: Բժ. ծխականն էլ, ի հարկէ, ունի իր շատ յայտնի փէշակը:

Ով քիչ թէ շատ հետեւել է դատաստանական պրակտիկային, նա անշուշտ նկատած կը լինի, որ շատ յաճախ վկանները սուտ երգումով հերքում են անկախորդ իրողությունները, անխիղճ վախատութիւնը, գողութիւնը և այլն, և պատահում է, որ այդպիսով իրական խարդախներին ու գողերին անպարտ են դուրս բերում, իսկ շատ անմեղ մարդկանց կորստեան պատճառ դառնում: Նոյն դերն է կատարում այժմ Մ. Բ. հատարական դատաստանի առաջ այն մարդկանց վերաբերմամբ, որոնք թէև քրէական պատասխանատուութիւնից ազատ են, բայց հասարակական դատաստանով պէտք է դատապարտված լինեն:

Ինչն է ստիպում մարդկանց սուտ վկայութիւններ տալ, սուտ երգուել ուրիշներին վնասելու համար.—նրա վնասը չար, մարդու անասնութեան հասցնող թշնամութիւնը, բնածին անբարոյական հակումները, որ մեծ մասամբ հետեանք են փոքրգոյութեան և բարոյական ու մըտաւոր սնչութեան: Ինչն է պատճառը, որ Մ. Բ. մօտ 100 մարդու ներկայութեամբ կատարված իրողութիւնները եղում, արտադրում և ստում է,—նոյնը, ինչ որ է առհասարակ բոլոր սուտ վկայութիւնների պատճառը:

Ամբողջ աշխարհին յայտնի է, որ երբ թիւրքիայի բոլոր անկիւններում ի վերուստ դրողն է զինված տաճիկները անդէն հայերին հազարներով մտրթում էին, թիւրքական լրագրիչները մի տեսակ լիտի տխմարութեամբ ամեն օր և ամեն ժամ գրում ու սրբում էին թէ՛ «չնորհիւ վեհափառ սուլթանի ամենայն տեղ կատարեալ խաղաղութիւն և արարողութիւն կը տրե՛ք»... ձիշդ այդպէս է վարվում այժմ և Մ. Բ. գրելով ու հաւատացնելով թէ՛ «չնորհիւ ուղղամիտ փարիսեցիների և աղնուհանդի ու անհասանքի վախառուների, Մոսկվայում ընտրողական դրոճերում կատարելով մարդկութիւն և անխարդախութիւն կը տրե՛ք»:

Այս է իսկապէս Մ. Բարիտուրքեանի յօդուածի բուն իմաստը, որին և մենք արժան համարեցինք պատասխանել, թողնելով անպատասխան թէ՛ նրա և թէ՛ միւսների այն բոլոր հայհուակներն ու հնարովի ստերը, որ միշտ ծառայել են և կը ծառայեն իբրև նիւթ միմիայն կոյուղի—լրագրիչների էջերը լցնելու համար:

Ե. Թաղանոսեան

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳՐՈՒԹԱՆ

Շուշի, յունվարի 10-ին

Խնդրում եմ տղադէք «Մշակի» մէջ հետեւեալը: «Ազգայնական Հանդեսի» լոյս տեսնելը փքանի օր ևս ուշանալու է, որովհետև պ. Վերլուի հիւանդութեան պատճառով, փոքր ինչ ուշացրել էր Բերլինում տպագրել տալ իր «Վոլկասի ցեղը ընտանեկան իրողութեան պատմութեան մէջ» յօդուածի պատկերները, որոնք զետեղվելու են հանդիսի ներկայ համարում: Այժմ այդ պատկերները ստացվել են Օդեսսա և այստեղ հասնելուն պէս՝ համարը լոյս կը տեսնի և կուղարկվի բաժանորդներին:

Ե. Լալայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է մէկ ու կէս թերթից:

Մենք անցեալ անգամ արդէն հաղորդեցինք, որ մի քանի էֆէնդիներ կ, Պոլսում՝ Նուրեան, Աբրահամ-փաշա և ուրիշները նորից գլուխ են բարձրացրել և ուղղում են ստապուել պատրիարքին երբ պէտք է հասկանան: Ստամբուլի էֆէնդիները և փաշաները, որ պատրիարքին հրաժարելու հրահրող կարող է լինել միայն այն հիմնարկութիւնը, որը նրան ընտրել է—ազգային ժողովը: Եւ քանի որ ազգային ժողովը իզմիրեանին ջերմ պաշտպան է, լաւ չէր լինի արդեօք, որ այդ էֆէնդիները բաւականանային իրանց սովորական փեշակով և ինքնակոչ կերպով չը խառնվէին մի ամբողջ ազգի գործերի մէջ...

Մենք արդէն հաղորդեցինք, որ պրօֆէսոր Տօմաշևի հրատարակել է մի գիտնական-պատմական հետազոտութիւն Սասունի մասին և զետեղել Վիեննայի ակադեմիայի հրատարակութեան մէջ: Այդ հետազոտութիւնը կունենայ և իր շարունակութիւնը, որ նուիրված կը լինի Սասունի տեղագրութեան: Լոյս տեսած մասը այժմ գերմաներէնից թարգմանված է «Հանդէս Ամսօրեան» համար, որի յունվարի համարում լոյս է տեսել թարգմանութեան սկիզբը:

Մենք ստացանք «Сборникъ свѣдѣній по кудурѣ цѣнныхъ растений на Кавказѣ» ժողովածուի երկրորդ հատորը, որի մէջ զետեղված են հետաքրքիր յօդուածներ թէ՛յի, քրքումի, եսպօնական արմաւի և բրինձի մասին: Թէ՛յը այժմ մշակվում է Բաթումի մոտերում—ըստ երեւոյթիս պէտք է ունենայ աղոյ արագաց: Քրքումի (շաֆրան) մշակութիւնը վաղուց յայտնի է Բաղուի դառուում և Կերբեղի շրջակայքում: Կովկասի քրքումը իր որակութեամբ լաւ տեսակիցն է և կարող է լաւ վաճառվել, եթէ նրա պատրաստութեան մէջ մտցնեն մի քանի կատարելագործութիւններ: Գիբքը բաղկացած է 129 մեծագիւր երեսից:

Հինգշաբթի, ամսիս 11-ին, վրաց ազնւականների թատրոնում հայ դերասանական ընկերութիւնը տուեց մի ներկայացում տ. Մէլիքեանի և պ. Յարութիւնեանի օգտին: «Պարիզի շրջմուտի տղայ» պիէսի մէջ տ. Մէլիքեան ունեցաւ մեծ աջողութիւն, պահպանելով ժողէֆի մի կողմից չարածի, միւս կողմից աղին և անձնուէր բնաւորութիւնը: Նա ստացաւ ծաղկեայ պատկեր և նուէր: Արեւելան՝ ժենեթայ Մօրիսի դերի մէջ՝ տպաւորութիւն գործին, սակայն նա դեռ կատարելագործութեան չէ հասցրել Մօրիսի տիպի ուսումնասիրութիւնը: Միւս կատարողները բաւարար էին: Տիկին Աւետեան, որ իբրև նոր ոյժ դերասանական ստապուել է դուրս եկել կարող է ունենալ ապագայ: Նա դեռ բաւականաչափ ազատ չէ բնի վրա, խօսքերի մէջ չի թիվում է, սակայն ընդհանրապէս ըմբռնում է վերցրած դերը: Փաստարանի մօտ՝ վոզըվիլում Տէր-Գալիեան, տ.տ. Փառանձեմ և Մէլիքեան, Յարութիւնեան և Հասան-Չալալեան դուրս ձայրին հատարակութիւնը իրանց աշխոյժ և ծիծաղաշարժ խաղով: Առանձին մի տեսարանում պ. Արեւելեան կատարեց «խելաբար»-ը, երաժշտութեան դասակարգութեամբ և վարձատրվեց բուն ծափահարութիւններով: Թատրոնը կատարելագույն լի էր:

Ներկայ յունվար ամսի 1-ին լրացաւ Պետերբուրգի համալսարանի հրատարակութեամբ լոյս տեսնող «Журналъ Юридическаго Общества» ամսագրի գոյութեան քսան և հինգամեակը: Խոսելով իր գործունէութեան մասին, ամսագիրը հետեւան է ստում. «Ով չէ իմանում, թէ որքան ծանր և պատասխանատու է մտքի ամենահամեստ, բայց աղին մշակի վիճակը, որը չէ կամենում դոճկ իր համոզմունքները մեր երեւրուն, հակումների և ձգտումների արագ փոփոխութեամբ հարուստ ժամանակում: Քանի հոգի կարելի է թելել, որոնք հաւատարիմ են մնացել և չեն դաւաճանել իրանց դրօշակին մինչև վերջը: Ռուսաստանի մտաւոր կենսւթի մասնակցողներին որին յայտնի չէ, թէ ինչեր է քաջել մասուլը մեր դարի վերջին քառամեակում»:

Յիչեցնում ենք մեր ընթերցողներին, որ առաջիկայ մեծ պատի առաջին շաբաթվայ երկրորդ կէսին, փետրվարի 8—11-ին, նշանակված են ծխակախոտագիտութեան մասին յատուկ նիստեր կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Գարձնում ենք մեր ծխակախոտագործերի ուշադրութիւնը այդ նիստերի վրա, յորդորելով, որ նրանք աշխատեն ներկայ լինել

այդ նիստերին և օգնեն ընկերութեան մշակելու նպատակալարմար միջոցներ՝ մեր ծխակախոտագործութիւնը զարգացնելու նպատակով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վ. ԵՐԶԻՆ, ՏԵՂԵՎՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ հաղորդում են Տրապիզոնից հետեւեալը. «Թիւրքաց կառավարութիւնը մտադիր է Շիւմսենեան եպիսկոպոսին, ստանց Պօլիս հանդիպեցնելու, Երուսաղէմ կամ այլուր ուղարկել, ամառուծիկ որոշուած է 20 օսմանեան ոսկի»:

Կ. Պօլսից «Новости» լրագրին գրում են. «Փոխ-ժողովապետ Արիֆ-փաշայի միսիան, որին սուլթանը ուղարկեց Պետերբուրգ, պարզ ցոյց է տալիս, որ Թիւրքիան ցանկանում է աւելի սերտ բարեկամութիւն հաստատել Ռուսաստանի հետ: Ասում են, որ սուլթանը իր ինքնագիր նամակի մէջ հորհակալութիւն է յայտնում Ռուսաստանին՝ նրա վերաբերմունքի համար դէպի Թիւրքիան վերջին ծանր հանգամանքների ժամանակ և յոյս է յայտնում, որ այդ յարաբերութիւնները չեն փոխվի և ապագայում, և այլն և այլն»:

Կ. Պօլսից գրում են. «Վաստեղ մի փոքր երկիւղ առաջացրեց զերմանական կանցլէրի Վիեննա մնալը: Այստեղ համոզված են, որ այն բաղմութիւ տեսակցութիւնները, որ կանցլէրը ունէր Վիեննայում, կազմ ունեն արեւելեան գործերի հետ: Այդ առարկայի վերաբերմամբ երկու ենթադրութիւններ կան. կամ Գերմանիան աշխատում է համոզել Աւստրո-Ռուսագրիային համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի հետ՝ գոյութիւն ունցող դժուարութիւնները բարեկամաբար լուծելու համար, թէ՛կուզ փոխադարձ զիջումներով, կամ նա ցանկանում է նախօրը որոշել պատասխանատուութեան այն մասը, որը իր վրա է առնում նրա դասնակից Աւստրիան այն դէպքում, եթէ Գերմանիան կը սկսի հակառակել Ռուսաստանին արեւելեան հարցում: Թէ՛ այդ և թէ՛ այլ դէպքերում Թիւրքիան, անկասկած, վտանգի կենթարկվի»:

Լճից՝ «Новости» լրագրին հեռագրում են. «Սուլթանը պատասխանեց Վիկտորիա թագուհու նամակին, թէ անգլիական լրագրիչները չափազանցում են գործերի գրութիւնը և որ թիւրքերը հայկական նահանգներում աւելի շատ մնալիցին, քան հայերը»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՅԻՑ

Կ. Պօլիս, յունվարի 2-ին

Պատրիարքը վար առնելու քաղաքականութիւնն է, որ ամենին աւելի այս օրերս կը զբաղեցնէ էֆէնդիները: Չեզի անձանօթ չեն այն ճիգերը, որոնք տեղի ունեցան վերջերս պատրիարքը «կարգի բերելու մտքով»: Պատրիարքը այդ փորձութեան մէջէն յաղթական դուրս ելաւ: Սակայն փորձիցները հանգարտ չը մնացին. սկսան նոր դաւեր սարքել Պատրիարքը վար առնելու: Էֆէնդիներուն խուճը, որուն պարագլուխն է Յովհաննէս էֆէնդիսի Նուրեան, կը փափաքի որ Պատրիարքը իր դիրքը փոխէ! Բայց որովհետև իրենց նպատակին հասնելու համար հանրային կարծիքի պէտք ունենին, դեռ ամիս մը առաջ ջանք եղաւ որ հայ թերթերը Պատրիարքին ընթացքը քննադատող յօդուածներ հրատարակեն: «Հայրենիք» որ առաւուսն թերթը ըլլալով իրեն կիցար այդ յօդուածը ամենէն առաջ հրատարակել, բոլորովին մերժեց. այդպէս միւս թերթերն ալ աղաւթեցան Պատրիարքին հակառակ յօդուածներ հրատարակելու ստիպումին: Կը մնան «Լոյսը» և «Մանգումէն», որոնք կը շարունակեն մինչև հիմայ Պատրիարքին հակառակ բարձրանջումներ ընել, առաջինը վաճառված ողորմելի եկեղեցականի մը շաբաթական թերթն է, որ հազիւ թէ քանի մը օրինակ կը տպուի, երկրորդին գոյութիւնը բոլորովին մոռացուած է հայոց մէջ:

Չենք կարծիք թէ Պատրիարքը տեղի տայ այս անգամ ալ այդ մեքենայութիւններուն: Սակայն

էֆէնդիներ կը շարունակեն իրենց փորձերը իզմիրեանը կամ «կարգի բերել» կամ վար առնել, այս նպատակը իրագործելու համար կազմուած է յանձնաժողով մը, որուն կանդամակցին քանի մը հայ էֆէնդիներ և երեք անարժան հայ եկեղեցականներ: Նուրեանէն զատ կան Նշան Սէֆէրեան, Ունճեան, Տիգրան Խառօֆեան, Յովհաննէս Թորոսեան և ուրիշներ, իսկ եկեղեցականներն են, Բարթողիմէոս եպիսկոպոս, Ետիրենի վատահամբաւ Մեսրոպ եպիսկոպոսը և Մուրադեան Մեղիքեանը: Կալիսկոպոսը, որ Գատրեֆել Քարողչին է և արդեւ եղած է ընդհանուր հանգամանակութեան՝ իր թաղին մէջ:

Անցած երեքշաբթի օր, զեկտեմբերի 26-ին, Երամեան Աբրահամ փաշան պատրիարքարան եկաւ, ըսելու Պատրիարքին որ կամ «կարգի դայ» կամ հրաժարի: Աբրահամ փաշան հիմայ բոլորովին անձանօթ է քաղաքում անձաւորութիւն մըն է. Սուլթան Ազիզին ժամանակները նշանաւոր դիրք ունէր, իբր Եգիպտոսի ներկայացուցիչ, ամեն օր պալատն էր և սուլթանը կը դուարձացնէր հետը նորտ խաղալով և ըմբամարտելով: Սակայն Ազիզին մեռնելէն ի վեր բոլորովին քաջուած կապրի, մինչև վերջը որսալով ձուկ, նապատակ և թուրք կիցներ: Ազգային գործերու մէջ ըստ մտած չէ. այնպէս որ խեղճ մարդը նոյն իսկ մինչև պատրիարքարան քացած օր չէր գիտեր թէ ով է հայոց պատրիարքը:

Պատրիարքը պէտք եղած պատասխանը տուած է Աբրահամ փաշային, յայտարարելով որ ինք ազգին կամովը ընտրուած է և այդ կամը միայն կրնայ զինքը հրաժարեցնել: Այսօր ալ խառն ժողով գումարուած էր պատրիարքարանը այդ խնդիրներով զբաղուած: Կը յուսանք թէ Պատրիարքը ամէն կերպով պիտի դիմադրէ եղած փորձերուն և պիտի յաջողի պահել իր դիրքը:

Վահէ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, զեկտեմբերի 15-ին

Այս օրերս պատահաբար մեր ձեռքն անցաւ 3 տարուց ի վեր ամենքը երեք անգամ Թաւրիզում պարսկերէն լեզուով հրատարակվող «Եւսարի» լրագրի այս տարվայ № 26-ը, որի խմբագիրն է պարսիկ սակաւթիւ ինտելիգենցիայի անդամներից ոմն՝ աղա Միրզա Թաղի: Լրագիրը՝ պաշտօնական յայտարարութիւններին, տեղական զանազան լուրերի և այլ և այլ բարոյաստութիւնների շարքում, ունի նաև քաղաքական բաժին—հեռագիրներ ու քաղաքական ֆրանսիական և անգլիական լրագրիչներից, առաւելագույն հայոց հարցին նուիրված: Ռուսալալի երկույթ է, որ՝ ինչպէս մեզ հաւատացրին, պարսիկ փոքրթիւ ինտելիգենցիայի հետ աղա Միրզա Թաղին հետաքրքրվում է «Մշակ»-ի գրուածներով և առհասարակ կովկասի թերթերով:

Մեր ծիծաղը չը կարողացանք զսպել կարգաւորով այդ լրագրի մէջ սուտ ու հնարովի տեղեկութիւններ, որոնք ծագել են թիւրքաց աղբիւրներից: Օրինակ, «Եւսարի» լրագրի խմբագիրը, հիմնվելով թրքամոլ հրատարակութիւնների վրա, ամեն բան նկարագրում է հակառակ կերպով, վերաբերելով հայերին այն բոլորը, ինչ որ թիւրքերն են արել:

Եթէ «Եւսարին» լաւ հասկանար իր հայրենիքի օգուտը և Շահի և նրա կառավարութեան բարի ձգտումները, չը պէտք է թող տար իրան հասարակաց միտքը պարսից ստապու և անհեթեթ լուրեր տպելով իր էջերում:

Թաւրիզի առաջնորդական փոխանորդ հայր Սարաճեան «Եւսարի» լրագրի № 26-ի վրա նահանգապետի (այն աղ-Գէօլլա) և վնեմ. թագաժառանգի ուշադրութիւնը հրաւիրեց. «Եւսարին» իր տպածների համար ստացաւ խիստ նկատողութիւն, որպէս հակառակ՝ Բարձր. Շահի և նրա կառավարութեան բունած արդար ուղղութեան:

Հակառակ «Եւսարի» մտածումներին, Թաւրիզի հայոց ժողովուրդը մի քանի օր առաջ Շահին շարժանք և բարձրատարրութիւն մի հեռագրով յայտնեց իր երախտագիտութիւնը, մասնաւոր վերջին օրերուն Շահի հայերի մասին ունեցած հայրական ինամքի համար:

Չ—իլ

ԿՈՒՒՒ ՓՈՂՈՎ

Ազգեր և պետություններ այժմ յաճախ կըտան են միմեանց հետ ոչ թէ զհեղուկ և վառողով այլ փողով և նրվածական հարստությունով: Այն փողով ընդհարումը, որ տեղի ունեցաւ նորերէն Ամերիկայի և Անգլիայի մէջ, մեծ վնասներ պատճառեց Ամերիկայի ֆինանսական աշխարհին, առաջ բերելով անակոթիւններ և գործարանները դադարում: Հարկեր միլիոնից աւելի են հալվում ստացած վնասը: Միացեալ Նահանգները հանրապետութիւնը իր կողմից կամենալով վնասել Անգլիային՝ բարձրացրեց բրդի և շինութիւնների համար պահանջովը նրվածքի մաքուրը 60 տոկոս, հացի և սաւարի մաքուրը 25%, և սահասարակ միւս ներմուծվող առարկաների համար 15%:

Ուրեմն, եթէ չէ կարելի, կամ զեւ չեն պատրաստված մարդիկ միմեանց զէմ զուրս գալու զհեղուկ, նրանք միմեանց խեղդում են դրամով, ֆինանսական ճնշումներով, նրվական հարուածներով:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այժմ ազգերի մէջ յարաբերութիւնները սահմանափակ չեն, ինչպէս չեն զարբերում, ազգերը կըզիացած չեն ապրում, այլ ընդհակառակը նրանք աւելի ու աւելի մեծացնում են իրանց յարաբերութիւնները, նկատելով հարորակցութիւնը իրեն ներկայ առաջընդունվեալն ամենամեծ պայմաններից մէկը: Այդ պատճառով այլսարհի մի որ և է ծայրում տեղի ունեցած մեծ ֆինանսական փոփոխութիւնը անմիջապէս ազդում է և բոլոր պետութիւնների վրա: Ամերիկայի մաքսային կոիւն, օրինակ, առանց ազդեցութեան չէ մնում նոյն իսկ այնպիսի մի հեռուէր անկիւնի վրա, ինչպէս մեր կովկասն է: Մեր բարբը մեծ քանակութեամբ զնում է Ամերիկա, ուր նա զործ է ածվում գործարաններում ամուր, թէն ոչ նուրբ մասուղ պատրաստելու համար:

Նոյն իսկ մեր հարևան թիւրքիայում, ճիշդ է, պատերազմ չըզաւ, զինուորական մեծ ծախսեր տեղի ունեցան. սակայն ֆինանսական վիճակը այնպէս վատթարացաւ, որ շատ տարիներ են հարկաւոր և այն բացառիկ կերպով նպաստաւոր տարիներ, որպէս զի բազմաթիւ զրոթիւնը վերականգնվի: Հիւսիսային զեկուցումները ցոյց են տալիս, որ վաճառականութիւնը երկրի մէջ, բացի Չիլիէնիայի յրջանից, ամեն տեղ կանգ է առել: Նա մասնաւոր այդ զգալի է ներկայումս Անգորս (Նիկիւրիա) քաղաքի յրջանում, ուր այժմ մաղի մեծ արդիւնաբերութիւն կայ և ամեն տարի այս ժամանակ զայն և վաճառականները և փող բաժանում այժմտեղերին և հողիւններին:

Տնտեսական ազդեցութիւնները և ճին ժամանակները ունեցել են նշանակութիւն պետութիւնների կեանքի և յարաբերութիւնների մէջ, բայց նրանք առաջ չուշելին այն մեծ և վճռող նշանակութիւնը, ինչ որ ունեն այժմ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՅ

ՊԱՐԻՉ, 10 յունվարի: Ֆլորէնթի թաղումը քաղաքացիական էր, առանց պաշտօնական բնաւորութեան: Բազմաթիւ են պատկերները Հասարակութեան ահագին բազմութիւն է ներկայ: Գերեզմանատանը մի քանի ճառեր արտասանեցին Բուրժուա, Պառնկարէ և Բէրանդէ:

Մէն Գէնիտու, ձուլարանում, ուր պատրաստվում են Գօշկիսի թխանութիւնները, հրդեհ ընկաւ:

ՖրիւրիւրՍՈՒՆԷ, 10 յունվարի: Իշխան Բիւմարկի ծանր հիւանդութեան մասին տարածված լուրերը անճիմն են:

Կ. ՊՈԼԻՍ, 10 յունվարի: Բ. Գուռը կամենում է պետութիւնների համաձայնութիւնն աւանդ պիւրի, պապիւրով թղթի, լուցիկների և խաղաղութի մենավաճառութեան համար:

Կ. ՊՈԼԻՍ, 10 յունվարի: Սկսել են արձակել զէւրի կանչված պահապիր զօրքի 35 բառայիւններ: Մնում են զեւ ևս 128 բառայիւններ:

ԼՕՆԻՕՆ, 10 յունվարի: Պրինց Բատալիերը վախճանովը յունվարի 8-ին «Blondel» կըլսերի վրա:

ՀԷԼՍԻՆԳՅՈՐՍ, 11 յունվարի: Նոյա Մեծութիւնների սրբազան յաջողութեանը ներկայ լինելու համար Մոսկուայում նշանակված են ֆինանսական զննարկ-նահանգապետը, Ֆինանս-գիւյի մինիստր ստատ-սեկրետարը, նրա օգնականը, Պայմէն և Տուչկըր սեկետորները, Հէլսինգօրսի համալսարանի ղեկավորը, չորս դասա-

կարգային ներկայացուցիչներ և զենեքալ Բամզայ:

ՊԱՐԻՉ, 11 յունվարի: «Figaro» հարորում է, որ Վիլհէլմ կայսրը պատրաստվում է գալ հարաւային Ֆրանսիա:

ԼՕՆԻՕՆ, 11 յունվարի: Բրազիլիայի կառավարութիւնը սնդում է, որ անպայաջ հեռանան անգլիացիները Տրինիդադ կղզուց:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՈՒՐ
Հրատարակիչ՝ ԱՆՌԻԷԱՍ ԱՐՄՈՒՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԳԱՐԱՆՈՒՄ
Էժան գնով վաճառվում են արտասահմանեան պատկերներ, շուրջհարական տոմսեր, կոտիլոնի նշաններ և զարդեր:
(№ 1)

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում
ԱԼԷԿՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԱՆՅԻ
ԵՐԿՈՒԹՈՒՄԲ
աշխատութիւնը, երկրորդ տպագրութիւն:
Գնողները կարող են զինել հեղինակի այրիի հասցէով, Тифлисе, 5-ий Участокъ, Оомная ул. № 15, г-жѣ Араратянъ. (№ 4) 2—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վարձուցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՌՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վնասական հիւանդութիւններ:
Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներարային ճ:
Կիր-բժիշկ ԴՈՒՆԱՅԷԼԱՐՈՒԿԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. ճ:

Ի. Ֆ. ՊՐՕՍԱՆՎԻԻԶ—12—1 ժ. ակնաչի, կուկիւրի, ջրի և կրծքի ճ. երկու-չարթի, չորեքչարթի և ուրբալի:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երկայնի և ներարային ճ. երկուչարթի, հինգչարթի և չարթի:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երկայնի ճ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ՊՐՕՍԱՆՎԻԻԶ—5—6 ժ. երեքչ. ճիւղը. և շարթի:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուչարթի, չորեքչարթի և ուրբալի:
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ճ. ներքին և մարթի ճ:
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոչորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խլի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժիշկապետ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

ԱՏԱՄՆԱՐՈՒԺԱՐԱՆ
Մ. Գ. ՀԵՉՈՒԲԵԱՆԻ
(Գօրծիկալի պրօպիւտ, առև Անանիոյի, նոր թատրոնի դէմ)
ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ առաւօտեան 9 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան: Բժշկում է առանիները, պլուր և անուժ և գնում է արհեստական առանիներ:
(№ 133) 12—30

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՊԱՐԿԵՒ ԱՅՍ ՏՕՆԵՐԻՆ
Հայոց Հրատարակչական ընկերութիւնը լոյս է ընծայել
ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՕ
Չորս լեզուով՝ հայերէն, ռուսերէն, վրացերէն և ֆրանսերէն: Վաճառվում է ընկերութեան գրասենեակում և բոլոր գրավաճառանոցներում:
Գինն է 1 ր. 20 կօպէկ:
4—5

ԴՕԿՏՕՐ ՎԱՀԷ ՄԻՆԱՍԵԱՆ
Կը յայտնէ իրան զինող հիւանդներին, թէ առաջիկայ սեպտեմբերից սկսեալ կը վերահաստատվի Վիէննա և իր հասցէն հետեւեալն է:
(№ 1)

Dr. WAHE MINASSIAN
Operator an der Klinik des Professor Chrobak. VIII. Schlüsselgasse 10.
OESTERREICH WIEN

VIII SUPPL. ՄՈՒՐՁ VIII SUPPL.
ԲԱԼԱՌԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ
ԲԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻ

ՄՈՒՐՁ՝ ամսագիրը 1896 թվականին կը հրատարակւի նոյն ճրագրով և նոյն զիւրով, որպէս և նախկին եօթ տարիներում:

«ՄՈՒՐՁ»-ը, որպէս անգեալուն էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի. 1) Յօդուածներ մեր կեանքի հիմնական սրբանիւնների մասին: 2) Վէպեր և պատմութեանը ինքնուրոյն և թարգմանական: 3) Ուսանաւոր-բանաստեղծութիւններ, պօէմաներ, ինքնուրոյն և թարգմանական: 4) Նկարագրական-ճամբորդական: 5) Պատմական: 6) Գիտական հանրամատչելի յօդուածներ: 7) Յօդուածներ անտեսական և սօցիալական ինդիւիւնների մասին: 8) Գրական քննադատութիւն: 9) Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին: 10) Ժամանակակից Տեսութիւն: Յօդուածներ հայկական կեանքի ընթացիկ ինդիւիւնների մասին: 11) Գաւառական նամակներ: 12) Թատրոնական քրոնիկ և քննութիւններ: 13) Թղթակցութիւններ (Բուսատեսից և Արտասահմանից): 14) Կարևորագոյն լուրեր ամսաց եղելութիւններից: 15) Տեղեկատուներ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՎԻՐԸ կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1896 թվականին առանձին ուշադրութեան առնվել այն ձևով, ինչպէս արդէն յայտնի է 1895 թվականի բաժանորդներին: «ՄՈՒՐՁ»-ի ՎԻՊԱԿԱՆ բաժինը ներկայումս աւելի քան կըր և իցէ ապահոված է յստակ աշխատակիցներով: «ՄՈՒՐՁ»-ը ունի աշխատակիցն և բի մի ստուար խուճի, որը կազմված է ամսագրի եօթնամսաց կեանքով և որով ապահովում են ամսագրի կարևորագոյն բաժինները: Աշխատակիցների կազմը լրացվում է նորերով, որոնց նպատակները երբեք չեն պակասել «Մուրճ»-ին: «ՄՈՒՐՁ»-ի 7 տարեկայ նիւթի երի լրակատար ցանկը ապագրվելու է առանձին քրոչիւրով:

ԲԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագիրն է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները վճարում են զիւրով 8 ռուբլի, արհեստագործները և բանուորները 7 ռուբլի: Վճարը կարելի է հատուցանել նաև մաս-մաս 3 ռուբլի սկզբում, 3 ռ. ևս մինչև մարտի 1-ը, մնացածը մինչև յունիսի վերջը:

ԲՈՒՈՐ 7 տարիների «Մուրճ»-ը 14 հատորով կազմած վաճառվում է 50 ռուբլով, իսկ առանձին-առանձին՝ որոշ գինով: Համաձայն առանձին յայտարարութեան:
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունվում են ամբողջ տարով՝ տողը 1 ռ., կէս տարով՝ տողը 75 կօպէկ: Ամբողջ կերեք՝ ըստ համաձայնութեան: Դիմել խմբագրատունը—Тифлисе, въ редакцію «Мурчъ»: Արտասահմանից—Tiflis. Rédaction «MOURTCH»:

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1896 ГОДЪ
на ежедневную политическо-общественно-литературную газету
„ЧЕРНОМОРСКИЙ ВѢСТНИКЪ“
(ВТОРОЙ ГОДЪ ИЗДАНИЯ)

Органъ Черноморья и Закавказья «Черноморскій Вѣстникъ»—первал и единственная на всемъ обширномъ восточномъ побережьи Чернаго моря газета—выходитъ ежедневно, за исключеніемъ послѣдипраздничныхъ дней, по полной программѣ столичныхъ политическо-общественныхъ ежедневныхъ изданий.

Подписная цѣна: на годъ—для городскихъ подписчиковъ, съ доставкой, 6 руб.—для иногородныхъ, съ пересылкой, 7 руб.—за границу 13 руб.; на полгода—для городскихъ 4 руб., для иногородныхъ 5 руб., за границу 9 руб.; на одинъ мѣсяць—для городскихъ 1 руб., для иногородныхъ 1 руб. 20 коп. Разсрочка платежа—по соглашенію съ конторой издана.

Тарифъ объявленій: на 4-й страницѣ, за мѣсто, занимаемое строкою петита, съ мѣстныхъ объявленій—8 коп., съ иногородныхъ—10 коп.; на 1-й страницѣ—вдвое. При многократныхъ объявленіяхъ—скидка.

Объявленія изъ за-границы и Россійской Имперіи, за исключеніемъ Кавказа, Закавказья и Закаспійской области, принимаются исключительно въ Центральной конторѣ объявленій тогоаго дома Л. и Э. Метцле и К^о, въ Москвѣ (Мясницкая, домъ Сытова) и въ Петербургѣ (Большая Морская 11).

Городскіе и иногородные подписчики благоволятъ адресоваться непосредственно въ КОНТОРУ „ЧЕРНОМОРСКАГО ВѢСТНИКА“, БАТУМЪ.
2—5 Редакторъ-Издатель Г. А. Пальме

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1896 ГОДЪ
на ежедневную, политическую, литературную, научную, общественную и коммерческую газету
„ОДЕССКІЯ НОВОСТИ“

ПОД ПИС НА Я Ц Ъ Н А:
Везъ доставки: На 1 мѣсяць—90 к., на 3 м.—2 р. 50 к., на 6 м.—4 р. 50 к., на годъ—8 р. Съ доставкой: на 1 мѣсяць—1 р., на 3 м.—2 р. 75 к., на 6 м.—5 р., на годъ—9 р. Съ пересылкою въ другіе города: На 1 мѣс.—1 р. 10 к., на 3 мѣс.—3 р., на 6 мѣс.—5 р. 50 к., на годъ—10 р.

За границу доплачивается къ подписной цѣнѣ 60 коп. въ мѣсяць. Для годовыхъ подписчиковъ допускается расрочка во взносѣ подписной платы для иногородныхъ: при подпискѣ 5 руб. и до начала второго полугодія въ 5 руб.; для городскихъ—при подпискѣ 5 руб. и до начала второго полугодія 4 руб.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: Въ Одессѣ: Въ Главной Конторѣ, на углу Римельской и Греческой, въ домъ № 10/24.
2—3 Редакторъ-Издатель А. П. Старковъ

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈՒՍԿԱՐԱՉ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ԹԻՓԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ
ՏԵԼԷՖՕՆ Ն 288
Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրատարակի վրա, և բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2 1/2-ը կէս օրից յետոյ:
Մուտքը վէլիամիսովսկայա փողոցից, քաղաքային դռնայի պողէզով:
(№ 90) (5) 19—20

1895 թ. նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏԵՐԻ ՄԻՍՏԵՄՈՎ պատրաստած
ԲՐՈՒՍՍՅԻ ԲՕԺՕԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ
որ արդէն անցեալ տարիներից յայտնի է կովկասում և Պարսկաստանում իր յստակութիւններով, և տուած առատ բերքով, «ԿՕՆՕՍՄԻԴԷՍ» ֆիրմայից:
Յանկայողները կարող են պահանջել Թիֆլիսի Ներքաւապահութեան կայարանում՝ ընկերուց յետոյ:
Գնել յանկայողները կարող են զինել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՓԼԻՍ, ԲԱԳՈՒԻ, ԵՂԷՐ, ՄՆԱՅԱԿԱՆՆԵԱՆՆԵՐԻՆ, իսկ ՆՈՒԻԻ՝ Ալա Մուսայ Մահմեդովի:
Այս հասցէով. Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ БАГУ.
(№ 138) (Կ. շ.) 13—24

